ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Բարդ նախադասության ուսուցումը 9-րդ դասարանում

ԱՌԱՐԿԱ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ Թերեզա Գալստյան

ՄԱՐԶ Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Իսահակյանի միջն. դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3
Բարդ նախադասության ուսուցման անհրաժեշտությունը 4
Բարդ նախադասության ուսուցման նպատակներն ու գործունեությունը 5
Բարդ նախադասություն: Բարդ համադասական նախադասություն 8
Համադաս նախադասությունների կապակցումը 9
Համադասական նախադասության բաղադրիչների իմաստային տեսակները 12
Եզրակացություն 15
Օգտագործված գրականության ցանկ 18

Ներածություն

Հայոց լեզուն որպես դասավանդման առարկա ներառում է երկու կողմ.նախ՝ բուն լեզվի իմացություն, այսինքն՝ այդ լեզվով հաղորդակցվելու, տարբեր բնույթի գրավոր ու բանավոր շարադրանք ստեղծելու կարողություն, և երկրորդ՝ լեզվի քերականական կառուցվածքի իմացություն, որը փաստորեն լեզվաբանական գիտելիք է:

Հայոց լեզվի դասավանդման ժամանակ առարկայի բովանդակությունը, խնդիրներն ու նպատակները, նյութերի ընդգրկումն ու ծավալը որոշելիս հիմք պետք է ընդունել մայրենի լեզվի դերը ինչպես ժողովրդի և անհատի կյանքում, այնպես էլ միջնակարգ կրթության մյուս առարկաների համակարգում:

Հայոց լեզվի ուսուցման նպատակը պետք է լինի սովորողի մեջ մշակել ժամանակակից գրական հայերենին համապատասխան խոսք կառուցելու, իր խոսքը վերահսկելու, բարբառային, ժարգոնային արտահայտություններից մաքրելու, մայրենի լեզվով ամենատարբեր բույթի տեքստեր և գրականություն կարդալու և ինքնուրույն հասկանալու կարողություններ: Կարևորվում է նաև բառարաններից, հանրագիտարաններից և այլ տեղեկատուներից օգտվելու, իր տարիքին ու կրթական փուլին համապատասխան գեղարվեստական և գիտահանրամատչելի գրականություն կարդալու, կարդացածը վերաշարադրելու և համառոտագրելու հմտությունների մշակումը, գործնական բնույթի զանազան փաստաթղթեր կազմելու կարողությունը ինչպես նաև տարբեր իրադրություններում համապատասխան խոսքային վարքագիծ դրսևորելու ունակությունը: [4, էջ102]

Հայոց լեզվի դպրացական դասընթացը անհրաժեշտ և բավարար գիտելիքներ է տալիս լեզվական համակարգի բոլոր բաժինների վերաբերյալ: Ելնելով ուսուցման նպատակադրումից՝ հայոց լեզվի դասընթացը պետք է կառուցել գործնական բնույթի գիտելիքների, հմտությունների ու կարողություններ զարգացման միտումով՝ զերծ մնալով դրան չնպաստող վերացական քերականական գծապատկերներից:

Հայոց լեզվի դասավանդումը հետապնդում է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծումը՝

- Գրագիտության ուսուցում, անսխալ ու վարժ գրելու և կարդալու հմտություններ ձևավորում.

- Աշակերտների բառապաշարի հարստացում, որը նպաստում է շրջապատող աշխարհի առարկաների ու երևույթների ճանաչմանը.
- Հայոց լեզվի կառուցվածքի, լեզվական միավորների և նրանց միջև առկա հարաբերությունների մասին համակարգված գիտելիքների ուսուցում.
- Լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության կարողություններ ձևավորում.
- Ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողություններ մշակում, լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուման ընթացքում կիրառելու հմտության ձևավորում.
- Տեքստի վրա կատարվող գործնական աշխատանքի միջոցով գրվածքի լեզվառճական առանձնահատկությունները բացահայտելու կարողության ձևավորում
- Շարադրություններ, փոխադրությունների, ռեֆերատների, համառոտագրման և այլ ստեղծագործական աշխատանքների միջոցով կապակցված շարադրանք ստեղծելու կարողություններ մշակում:

Բարդ նախադասության ուսուցման անհրաժեշտությունը

Իններորդ դասարանում աշակերտները պետք է ուսումնասիրեն բարդ նախադասությունը: Ըստ էության՝ այս դեպքում նրանք պետք է զուգակցեն տեսականն ու գործնականը, ինչը նպատակաուղղված է նրանց տրամաբանական մտածողության զարգացմանը, լեզվական միավորները ճիշտ հասկանալուն և տարբերակելուն:Առավել պետք է կարևորել բարդ նախադասության կապակցման միջոցները՝ համադասական և ստորադասական շաղկապների տեսակները, առավել ևս դրանց արտահայտած իմաստային հարաբերությունները:

Բարդ նախադասությունների մարդիկ դիմում են ավելի տարողունակ մտքերով հաղորդակցվելու նպատակով: Այն նպաստում է նաև օտար լեզուների բառապաշարային, կառուցվածքային ընդհանրությունների ու տարբերությունների ըմբռնմանը, մայրենի լեզվի և օտար լեզուների հաղորդակցական հնարավորությունների համադրմանը:

Այս թեմայի ուսուցումը լայն հնարավորություն է տալիս օգտագործել ուսուցման գործունեության տարբեր տեսակներ, տեխնոլոգիաներ ու մեթոդներ՝ անհատական, զույգերով ու խմբային աշխատանքներ, տեքստային և խոսքային, հետազոտական, ստեղծագործական աշխատանքներ:

Ուսումնական գործունեությունը բարդ ու բազմակողմանի գործընթաց է, որն արդյունավետ կազմակերպելու համար պետք է հաշվի առնել ինչպես ուսուցչի, այնպես էլ սովորողի գործուն մասնակցությունը այդ գործընթացին: Սովորողին պետք է դիտել ոչ միայն որպես կրթության և ուսումնառության օբյեկտ, այլև սուբյեկտ և մասնակից, որը պետք է պատասխանատվությամբ վերաբերվի ուսումնական գործընթացին, գիտելիքին հասնելու և դրան տիրապետելու ճանապարհին դրսևորի հաղորդակցական, համագործակցային և հանդուրժողականության որակներ: Անհրաժեշտ գիտելիքներ ստանալուն զուգընթաց սովորողը պետք է ձեռք բերի ինքնուրույն որոշումներ կայացնելու, ինքնուրույնաբար գործելու հմտություններ, կուտակի հետագա կյանքի և աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ սոցիալական փորձ: [4, էջ124]

Ուստի ժամանակակից հանրակրթական դպրոցում յուրաքանչյուր ուսումնական բնագավառում ուսումնական գործունեության տեսակները նախագծելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն տվյալ առարկայի գծով գիտելիքների հաղորդման, այլև սովորողի մեջ նշված հատկանիշների ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը:

Բարդ նախադասության ուսուցման նպատակներն ու գործունեությունը

Ուսուցանվող նյութը	Ուսումնական նպատակը	Ուսումնական գործունեությունը
	Լեզվական գիտելիքներ	
• Նախորդ դասարանում անցածի կրկնություն • Շարահյուսություն • Բարդ	• Իմանալ հայերենի շարահյուսական կառուցվածքի առանձնահատկությունները	• Տեքստային աշխատանք, տեքստի սհարունակական վերլուծության՝ կապված բարդ

նախադասություն, նրա կառուցվածքը. Բարդ նախադասության բաղադրիչների իմաստային, հնչերանգային, կառուցվածքային միասնությունը • Բարդ համադասական նախադասություն, համադաս նախադասությունների կապակցումը և կետադրությունը • Համադասական շաղկապներ • Ստորոգյալի լրիվ կամ մասնակի զեղչումը բարդ համադասական նախադասությունն-ում և կետադրությունը • Բարդ ստորադասական նախադասություն, գերադաս և ստորադաս նախադասություններ, դրանց կապակցման միջոցները՝ շաղկապներ, հարաբերական դերանուններ և	, բարդ մտքերը ձևակերպելու և տարբեր կերպ արտահայտելու հնարավորությունները • Զարգացնել բազմաբնույթ և բարդ տեքստեր կազմելու և ընկալելու կարողությունները՝ շարահյուսական բազմազան կառույցների ճիշտ և տեղին գործածությամբ • Գրավոր և բանվոր խոսքում կիրառել բարդ նախադասություններ՝ պահպանելով նրանց իմաստային և հնչերանգային ամբողջականությունը • Զարգացնել ճանաչողական հմտությունները՝ համեմատել և տարբերել պարզ և բանդ նախադասությունները տեսնել նմանություններն ու տարբերությունները, ընդհանրացնել • Զարգացնել	նախադասությունների տեսակներ որոնման, ճանաչման և մեկնաբանման հետ • Վարժություններ՝ կապված տարբեր տեսակի բարդ նախադասությունների կետադրման հետ • Վարժություններ՝ կապված միևնույն միտքը տարբեր լեզվական կառույցներով արտահայտելու հետ (պարզ, բարդ համադասական, բարդ ստորադասական նախադասություններով) • Վարժություններ՝ կապված շաղկապների և հարաբերական դերանուններ ճիշտ գործածության և տարածված սխալներից խուսափելու հետ (որպեսզի/որ, որը/ինչ, ոչ թե... այլ, ոչ միայն ... այլև են) • Նկարագրել միևնույն իրադրությունը

հարաբերական բառեր • Ստորադասական շաղկապներ, հարաբերյալի և հարաբերական բառի զուգորդություն • Ստորադասական նախադասության շարադասությունն ու կետադրությունը • Ստորադաս նախադասության բնույթը	հաղորդակցական և ստեղծագործական կարողությունները՝ ազատ գործածել բարդ նախադասությունները, կարողանալ ընտրել դրանց տեսակը՝ կախված խոսքի ոճից և գործառական բնույթից • Ճիշտ կետադրել բարդ համադասական և ստորադասական նախադասությունները • Զարգացնել ճանաչողական, հաղորդակցական, ինքնակազմակերպական կարողություններ	գեղարվեստական հրապարակախոսական ոճերով՝ գործածելով ***մեջբերվող*** խոսք


Նկար 1

ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բարդ նախադասություն: Բարդ համադասական նախադասություն

Բարդ է երկու և ավելի բաղադրիչ նախադասություններից կազմված նախադասությունը:

Իմ կյանքը մի նուրբ մշուշ է այստեղ,

Գուրգուրում է ինձ մի լույս հանգրվան...

.....

Վաղուց թեև իմ հայացքը Անհայտինն է ու հեռվում,

Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,

Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ,

Մզկտում է սիրտս անվերջ քո թառանչից աղեկեզ.....

Ի տարբերություն միջանկյալ նախադասություն ունեցող պարզ նախադասության՝ բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները քերականորեն կապված են համադասական կամ ստորադասական հարաբերությամբ: Այդ հատկանիշով էլ որոշվում են բարդ նախադասության տարատեսակները:

<u>Համադասական</u> է այն բարդ նախադասությունը, որը կազմված է իրար համադաս բաղադրիչ նախադասություններից: [5, էջ 99]

Դրանցից որևէ մեկը մյուս նախադասության որևէ անդամի դեր չի կատարում, այսինքն՝ քերականորեն կախված չէ մյուսից, ինքնուրույն է:Այդպիսի բաղադրիչները կոչվում են <u>համադաս նախադասություններ:</u>

Գրիգորը հետ նայեց. Կածանով բարձրանում էր Սանասարը:

Համադաս նախադասությունները կամ դրանցից մեկը կարող են լինել միակազմ. *մահացողի տխուր կյանք. Անձրև, քամի,սև կամար...Մեկը իմ սիրտը փշրելով անցավ. Օ՜, քաղցր արբանք:*

Երկկազմ համադաս նախադասություններն ունենում են տարբեր ստորոգյալներ, որոնցից ամեն մեկը կարող է ունենալ իր ենթական(երը) և լրացում(ներ)ը.

Լույսն էր մեռնում, օրը՝ մթնում,

Մութը տնից տուն էր մտնում:

Այսպիսի կառույցը կոչվում է տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասություն:Դրա մի տարատեսակն է կրկնվող ենթականերով բարդ համադասական նախադասությունը, որի բաղադրիչներից ամեն մեկն ունի իր ենթական՝միևնույն արտահատությամբ և միևնույն բովանդակությամբ.

Մեկը շշուկով պատմում է կամաց,

Մեկը իմ հոգին տանջում է համառ:

Եթե կրկնվող ենթական <<ընդհանուր է հանված>> կամ զեղչված է բոլորում, ապա այդպիսի նախադասությունը կոչվում է ընդհանուր ենթակայով բարդ համադասական նախադասություն.

Հեռավոր մարդոց ցավերը կզգամ,

Կարկաչող ջրի լացը կլսեմ...

Ընդհանուր ենթակայով չէ այն բարդ համադասական նախադասությունը, որի բաղադրիչներից առնվազն մեկը միակազմ է. [1 էջ 509]

Առավոտից անձրևում էր, և մենք չկարողացանք տնից դուրս գալ:

Բավական է, անցած բանի հետևից չեն ընկնի:

Համադաս նախադասությունների կապակցումը

Բարդ համադասական նախադասության բաղադրիչնախադասությունները կարող են կապակցվել՝

- **Համադասական շաղկապով.** *Աղջիկները գաղտագողի հաբացքով ուղեկցում էին նրան, իսկ ավելի համաձակները ժպտում էին: Սարալանջում էլ ոչ մի կաքավ չէր կաղում, և ոչ լոր էր ճկում:*

- **Միայն հնչերանգով.** *Սրածայր թրերի պես շողշողում էր ժանիքները, անշնորհք շարժումներով արջին մնում էր բարձրանալ կաղնու վրա:*

Համադասական շաղկապների մի մասը կապում է թե նաախադասության համադաս անդամներ թե համադաս նախադասություններ(**և, ու, կամ, նաև, այլ, ոչ միայն...այլև, ոչ թե... այլ, կամ թե չէ, և... և, թե... թե, ոչ... ոչ):**

Համադասական շաղկապների մյուս մասը կապակցում է առավելապես կամ միայն համադաս նախադասություններ(**իսկ, այնինչ, բայց և այնպես և այլն):**

Կրկնադիր և զուգադիր շաղկապները լինում են համադաս նախադասությունների սկզբում՝ իրենցից առաջ թողնելով միայն համադասս նախադասությունների ընդհանուր անդամները օրինակ՝ ***Գոռը առավոտյան ոչ միայն մարզանք է անում, այլև սառը ցնցուղ է ընդունում: Այս երեկո ոչ ես դասերս սովորեցի ոչ էլ դու գնացիր համերգ:***

Մենադիր շաղկապները սովորաբար լինում են համադաս նախադասությունների միջը: Օրինակ՝ ***Արդեն խշշում են բարդիների բարձր կատարները իսկ ներքին ճյուղերը խավարի մեջ դեռ անշարժ են :***

Սակայն **էլ** շաղկապը կարող է միջադասվել համադաս եչկչոչդ նախադասությանը: Օրինակ՝ *Գլորվեցին տուփերը, տղան **էլ** գլորվեց: Ձիու վրա նա սպիտակ չեր հագնված թևերն էլ աչմունկները բաց չէին:*

Շաղկապով միացած համադաս նախադսություններ միջև մեծ մասամբ ստորակետ է դրվում: Ստորակետ չի դրվում միայն այն դեպքում երբ ընդհանուր ենթակայով համադաս նախադասությունները միացած են լիմում **և, ու, կամ** շաղկապներից մեկով: Օրինակ՝
Առավոտյան արի իմ աշխատավայր կամ երեկոյան կարող ես այցելել մեր տուն:

Տարբեր ենթականերով համադաս նախադասությունները միացնող **և, ու, կամ** շաղկապներից առաջ դրվում է ստորակետ: **Կհանդիպենք ժողովից հետո, կամ ես քեզ կգտնեմ հեռախոսով:**

Անշաղկապ համադաս նախադասություններ միջև դրվում է ստորակետ կամ միջակետ: Ստորակետ է դրվում եթե բաղադրիչ նախադասություններ կապը սերտ է. Անտուն անցորդից կխնդրեմ ես հաց, Պայծառ աղբյուրի ջուրը կխմեմ...

Միջակետ է դրվում, եթե՝

- Բաղադրիչ նախադասությունները համեմատաբար ինքնուրույն են. **Դու անհոգ նայեցիր ինձ ու անցար քո խաղով կանացի. Ես քեզնից դառնացած հեռացա, Ես քեզնից հեռացա ու լացի:** [2, էջ225]
- Բաղադրիչ նախադասություններից երկրորդը առաջինի մեկնաբանությունն է. **Ես սիրահարված եմ. Սիրում եմ մեր դասարանի Մարոյին:**
- Բաղադրիչ նախադասությունների միջև առկա է պատճառի, հետևանքի, հիմունքի հարաբերություն, որ կարելի է արտահայտել **որովհոտն, քանի որ, ուստի, հետևաբար, ուրեմն, այնպես որ** շաղկապներով, այդ պատճառով շաղկապական բառով:

  Թույլտվություն վերցրեցի և լսարանից դուրս եկա. անտանելի հոգնած էի. քունս տանում էր.
- Բաղադրիչ նախադասություններից երկրորդը հավելյալ տեղեկություն է տալիս առջինում ասծի վերաբերյալ.

Պառկած էի շորերով. անգամ կոշիկներս հագիս չէին

Միջակետով անջատված համադաս նախադասություններից երկրորդը երբեմն կարող է սկսել շաղկապով, որը տվյալ ոչ թե քերականական, այլ իմաստային կապ է ապահովում այնքան սերտ չի դարձնում նախադասություն կապակցումը, որ միջակետի փոխարեն ստորակետ դրվել.

Ասում են՝ **Լուսինեն քննություններին լավ չի պատրաստվում. թեև չարժե, որ ես նրա համար այդքան մտահոգվում եմ:**

Հմադաս նախադասությունների շարադասությունը կայուն է, եթե նրանց միջև առկա է ժամանակային կամ պանճառահետևանքային հարաբերություն.

Խաղաղ գիշերով դու կգաս ինձ մոտ, Քնքուշ ձեռներդ ես կհամբուրեմ... Կռանում եմ տերևներ վրա, ռունգներս լայնանում են սուսամբարի հաճելի հոտից:

Այլ դեպքերում համադաս նախադասություններ շարադասությունը ազատ է, թեև կարող է ունենալ ոճական արժեք՝ ազդելով տրամաբանական շեշտի վրա.

Մութը հյուսում է տրտմության ժանյակ, Ծաղիկներն անուշ բույր են բուրվառում... Ինձ հեռվից լույս փարոս չի կանչում, Չի ժպտում ինձ խաղաղ հանգրվան... Մոռացել եմ ես ամենքին, միայն քեզ եմ ես հիշում... [3, էջ 99]

Համադասական նախդասություններում զեղչված ստորոգյալների փոխարեն բութ է դրվում: Բութ դրվում է նաև զեղչված ստորոգյալի փոխարեն ոչ-ից առաջ՝

Հայրս համաջայն էր որ ես գնայի քաղաք սովորելու. Մայրս՝ ոչ:

Մյրս շատ էր սիրում համերգներ ու ներկայացումներ գնալ, հայրս՝ոչ:

Համադասական նախադասության բաղադրիչների իմաստային տեսակները

Ըստ ներքին տրմաբանության և իմաստային կաղվածությանհամադասական նախադասության բաղադրիչները իրար հետ կապված ն 4 կարգի հարաբերությամբ՝ միվորական, հակադրական(ներհակական), տրոհական, հավելական(մեկնական):

Միավորական հարաբերություն

Այս տիպի համադասության բաղադրիչ նախադասություններում թվարկվում, միավորվում են իրար չհակադրվող կամ չբացառող փաստեր, իրադրություններ: Սրանք իրար հետ կապակցվում են միավորիչ շաղկապներով(**և, ու, նաև, ևս, նույնպես, և... և, թե... թե, ոչ... ոչ, էլ... էլ**)և թվարկման հնչերանգով: Կապակցվում են նաև շարահարությամբ: [2, էջ 122]

Համադասության այս տիպում ամենից առաջ առկա է ժամանակային հարաբերությունը, այսինքն՝ սրանցում գործողություններնեը կարող են տեղ ունենալ միաժամանակ կամ հաջորդել իրար:

Ա. **Համաժամանակյա- Աղբյուրները հնչում են ու անց կենում,**

Ծարավները տենչում են ու անց կենում,

Ու երջանիկ ակունքներին երազուն՝

Պոետները կանչում են ու անց կենում:

Այս տիպի համադասության ստորոգյալները կարող են լինել նաև անվանաբայական՝ բաղադրյալ՝

Ես ուրախության գործակատար եմ

Եվ խոր խնդության վաճառող եմ ես(Պ. Ս);

Հողն անուշ է, երգն անուշ է, կյանքը ուրախ էս տարի,

Հողի մարդու աչքը կուշտ է՝ Ահ չունի նա էս տարի(Գ. Ս):

Բ.**Տարաժամանակյա**- Բնականաբար այս տիպի համադասականներում գործողությունները պետք է պայմանավորված լինեն իրարով՝ հաջորդեն իրար.

Էլի գարուն կգա, կբացվի վարդը,

Սիրեկանը էլի յարին կմնա.

Կփոխվեն տարիքը, կփոխվի մարդը,

Բլբուլի երգը էլի սարին կմնա(Ե.Չ):

Գ. **Միավորական** հարաբերություն արտահայտող համադասականների մի երրորդ տեսակում էլ պատճառահետևանքային իմաստն է, երբ մի նախադասության ենթակայի գործողությամբ պայմանավորված է մյուս նախադասության ենթակայի գործողությունը: Օրինակ՝ **<<Երգում է Սարոն, ու չի կարենում աղջիկը հանգիստ նստի վրանում>>(Հ.Թ) նախադասության մեջ աղջկա՝ վրանում հանգիստ նստել չկարողանալու պատճառը Սարոյի երգելն է:**

Անցյալի քաղցր հիշողությունները հուզեցին հոգիս, և ես նորից կարդացի դրանք(Վ. Փափազյան):

Հակադրական հարաբերություն [3, էջ102]

Համադասական նախադասությունների այս տեսակը կոչվում է նաև ներհակական. Սրանց բաղադրիչները իրենց ներքին տրամաբանությամբ ու իմաստներով հակադրվում են իրար: Դրանք կապակցվում են ներհակական շաղկապներով(**իսկ, բայց, սակայն, մինչդեռ, միայն, այնինչ, ապա, բայց և այնպես, այնուամենայնիվ, թե չէ, եթե ոչ, ոչ թե, այլ և այլն)**

Օրոր է ասում աշունն անտառին,

Բայց դեռ անտառի քունը չի տանում(Հ.Ս)

Համադասականի այս տեսակը նույնես ունի իմաստային տարբերություններ. Սրանց մի մասում փաստերն ու իրողությունները զուգադրվում են իրար ու **հակադրվում**, մյուս տեսակում նկարագրվող փաստերը **ժխտումեն** իրար, մի այլ դեպքում պայմանահակադրական հարաբերություն են ցույց տալիս: Դրանք ցույց տանք օրինակով.

Ա. **Զուգադրահակադրական**- Ճեմարան գնալու բախտը վիճակվեց Սողոմոնին, սակայն փող չուներ:

Բ. **Ժխտական**- Ոչ թե երեխան է անընդունակ, այլ ուսուցիչը լավ չի բացատրում:

Գ. **Պայմանահակադրական**- Խաչատուր Աբովյանը բջջային հեռաղոս չուներ, այլապես չեր կորի:

Դ. **Սահմանափակման**- Հանկարծ տեսավ նրան, ցնցվեց, ոստյուն արեց դեպի նա, բայց մի կրակված ձեռք փակեց հնձանի դռնակը:

Տրոհական հարաբերություն

Տրոհական հարաբերություն արտահայտող համադաս նախադասությունների գործողություններից, իրողություններից մեկն է իրական կամ հնարավոր: Սրանք կապակցվում են տրոհական շաղկապներով(**կամ, կամ թե, կամ թե չէ, կամ... կամ, ոչ այն** է):

Կամ դերասանին կբերես նրա մոտ, կամ թե չէ նրա հետ կգնաս հոների թագավորի մոտ:

Հավելական հարաբերություն

Այս տեսակը կոչվում է նաև մեկնական և ցույց է տալիս , որ նախադասության հիմնական մասին ավելանում է մի նոր իրողություն, բացատրվում կամ ճշգրտվում է առաջինի իմաստը. **Կապակցվում են (այսինքն, ուրեմն, հետևաբար, ասել է..., ըստ որում, ընդ որում, և նման բառերով):** Այս տիպի հմադասականները թեև գործածվում են ոճերի բոլոր տեսակներում, բայց դրանք ավելի հատուկ են գիտական և վարչագործառական ոճերին: **Օրինակ՝ Բոլոր ձկները շնչում են խռիկներով. Իշխանը ձուկ է, հետևաբար իշխանը շնչում է խռիկներով:**

Հասմիկը բոլոր քննությունները հանձնել է <<գերազանց>>- ներով, ուրեմն նրան պետք է գերազանցիկի թոշակ տալ:



Եզրակացություն

Հայոց լեզվի ուսուցման նպատակը պետք է լինի սովորողի մեջ մշակել ժամանակակից գրական հայերենին համապատասխան խոսք կառուցելու, իր խոսքը վերահսկելու, բարբառային, ժարգոնային արտահայտություններից մաքրելու, մայրենի լեզվով ամենատարբեր բույթի տեքստեր և գրականություն կարդալու և ինքնուրույն հասկանալու կարողություններ:

Հայոց լեզվի դպրացական դասընթացը անհրաժեշտ և բավարար գիտելիքներ է տալիս լեզվական համակարգի բոլոր բաժինների վերաբերյալ:

Ուսումնական գործունեությունը բարդ ու բազմակողմանի գործընթաց է, որն արդյունավետ կազմակերպելու համար պետք է հաշվի առնել ինչպես ուսուցչի, այնպես էլ սովորողի գործուն մասնակցությունը այդ գործընթացին:

Անհրաժեշտ գիտելիքներ ստանալուն զուգընթաց սովորողը պետք է ձեռք բերի ինքնուրույն որոշումներ կայացնելու, ինքնուրույնաբար գործելու հմտություններ, կուտակի հետագա կյանքի և աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ սոցիալական փորձ

Ուստի ժամանակակից հանրակրթական դպրոցում յուրաքանչյուր ուսումնական բնագավառում ուսումնական գործունեության տեսակները նախագծելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն տվյալ առարկայի գծով գիտելիքների հաղորդման, այլև սովորողի մեջ նշված հատկանիշների ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայոց լեզվի և գրականության առարկայական չափորոշիչներ և ծրագրեր
2. Ֆ. Խլղաթյան -<<Հայոց լեզու>> դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար <<Զանգակ-97>>
3. Հ. Զաքրյան, Յու. Ավետիսյան, շարահյուսություն<<Զանգակ 97>>
4. Խ. Բաղիկյան<< Շմանակակից հայոց լեզվի շարահյուսություն>>
5. Հ. Զաքարյան, Յու Ավետիսյան, Ա.Աբրահամյան<< Հայոց լեզվի և գրականության ձեռնարկ-շտեմարան>>